Մարզպետարան դիմած քաղաքացիների դիմումների,

բողոքների 2014թ.-ի առաջին եռամսյակի ամփոփագիր

2014թ-ի առաջին եռամսյակում ստացվել է 231 դիմում:

ա/ Դրամական օգնություն է խնդրել 170 քաղաքացի: Դրական պատասխան է ստացել 164-ը, մերժվել՝ 2-ը, ընթացքի մեջ է 4 դիմում: /Դրամական օգնության դիմումները մերժվել են հիմնականում կրկնակի լինելու կամ ընթացիկ եռամսյակում օգնություն ստացած լինելու հիմքով/:

բ/ Բնակարանային և քաղաքաշինական հարցերով դիմել է 15 քաղաքացի, որից 9-ի խնդրանքը բավարարվել է, 5-ինը՝ մերժվել, 1 դիմում ընթացքի մեջ է: /Բնակարանային պահանջի դիմումները մերժվել են մարզպետարանի իրավասությունից դուրս լինելու պատճառով/:

գ/ Առողջապահական բնույթի 12 դիմումից դրական պատասխան է ստացել 10-ը, մերժվել է՝ 2-ը: /Առողջապահական հարցերով դիմած քաղաքացիները մերժվել են պետ. պատվերի և առողջարանային ուղեգրերի սահմանափակ լինելու պատճառով:

դ/ Աշխատանքի հարցերով դիմած 10 քաղաքացիներից 4-ի պահանջին դրական ընթացք է տրվել, 6 դիմում մերժվել է, /դիմումները մերժվել են աշխատատեղ չլինելու պատճառով/:

ե/ Գյուղատնտեսական հարցերով դիմած 4 քաղաքացիներից բոլորն էլ ստացել են դրական պատասխան:

զ/ Կրթության և մանկական հիմնարկներին առնչվող հարցերով դիմել է 10 քաղաքացի և բոլորն էլ ստացել են դրական պատասխան:

է/ հողաշինության հարցերով դիմած 7 քաղաքացիներից 6-ը ստացել են դրական պատասխան, 1 դիմում ընթացքի մեջ է:

ը/ Որդեգրման, մանկատնից երեխային վերադարձնելու և ներառական կրթության վկայագիր տրամադրելու հարցերով դիմել են 2 քաղաքացի և ստացել դրական պատասխան:

թ/ Այլ բնույթի 1 դիմում է հաշվառման վերցված, որին տրվել է դրական պատասխան:

ժ/ Սեփականաշնորհման բնույթի դիմումներ ներկայացրած քաղաքացիներին առաջարկվել է դիմել դատարան:

Փ. Ղազարյան

մարզպետարանի աշխատակազմի

քարտուղարության ընդհանուր բաժնի պետ